*ՄԱՀԱԳՐԱԿԱՆ*

# Ի ՏԵՐ ՀԱՆԳՅԱՎ
# Հ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԸ

Հ. Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանը (ավազանի անվամբ՝ Արտաշես) ծնվել է Բեռլինում 1920 թ. նոյեմբերի 16-ին:

Հայրը՝ Տ. Բաբկենը, և մեծ հայրը՝ Տ. Ներսեսը, եղել են Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու քահանաներ:

Նա երկու տարեկան էր, երբ մահանում է մայրը, և ինքը տարվում է Ռումինիա ու հանձնվում իր մեծ հոր խնամքին:

Սկզբնական կրթությունը ստանում է Բուխարեստի Միսաքյան վարժարանում 1926-1931 թթ.:

Այս տարիներին ապագա հոգևորականի ուսուցիչն էր Լևոն-Կարապետ Պալճյանը՝ ապագա Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը: Երջանկահիշատակ Հայրապետի համար տասնամյակներ անց էլ Հ. Ներսեսը մնաց որպես իր սիրելի աշակերտը:

1931-33 թթ. ուսանում է Սոֆիայի Մեսրոպյան վարժարանում՝ ուսուցիչ ունենալով ժամանակի ճանաչված մտավորականներից Գևորգ Մեսրոպին:

1933 թ. հոկտեմբերի 3-ին Հ. Մկրտիչ Պոտուրյանի առաջարկով ուսանելու է մեկնում Ս. Ղազարի Մխիթարյան վարժարան:

1939 թ. սեպտեմբերի 17-ին դառնում է Մխիթարյան միաբանության նորընծա անդամ, իսկ 1940 թ. հոկտեմբերի 24-ին հոգևորական ձեռնադրությամբ ստանում է իր մեծ հոր՝ Տ. Ներսեսի անունը:

1941-1947 թթ. ուսանում է Հռոմի Գրիգորյան համալսարանի իմաստասիրության և աստվածաբանության ֆակուլտետներում:

1946 թ. սեպտեմբերի 8-ին՝ Ս. Աստվածածնի տոնին, Ս. Ղազարում կուսակրոն աբեղա է ձեռնադրվում՝ ձեռամբ Սարգիս արքեպս. Տեր-Աբրահամյանի:

Հռոմում ուսումնառությունն ավարտելուց հետո վերադառնում է Ս. Ղազար և նվիրվում գիտամանկավարժական և խմբագրական գործունեության՝ Ս. Ղազարի և Մուրադ-Ռաֆայելյանի սաների համար մնալով որպես «Հայր վարժապետ»:

Իր դասավանդած գլխավոր առարկաներն էին գրաբար, արևմտահայերեն, իմաստասիրության պատմություն, հայ հին գրականություն, հունական և լատինական գրականությունների պատմություն և եկեղեցական երաժշտություն: Որպես շարականագետ երկար տարիներ վարում է Ս. Ղազարի դասապետի, ինչպես նաև լուսարարապետի պաշտոնները:

1948-52 թթ. խմբագրում է «Մխիթարյան ընտանիք» ամսաթերթը, 1948-1957 թթ. միաժամանակ լինելով օգնականը «Բազմավեպ»-ի խմբագրի, ապա 1957-64 թթ, 1967-68 և 1974-79 թթ. ստանձնելով ամսագրի խմբագրի պաշտոնը:

Թե՛ «Բազմավեպ»-ին աշխատակցելու և թե՛ մնացյալ տասնամյակներին մի քանի հարյուր հոդված է հրատարակել ամսագրի էջերում՝ նվիրված Մխիթարյան միաբանության, Սփյուռքի և Հայաստանի գիտա-մշակութային կյանքին ու տարբեր իրադարձություններին, կրոնա-աստվածաբանական և հայագիտական ամենաբազմազան հարցերին, կատարել թարգմանություններ եվրոպական լեզուներից և փոխադրություններ՝ գրաբարից, ինչպես նաև տպագրել գրախոսականներ, հրապարակումներ ամենատարբեր հոբելյանների առիթով և հիշատակի մահագրական խոսքեր:

1964-76 թթ. դառնում է ընդհանուր քարտուղարը Մխիթարյան միաբանության:

1976-82 թթ. եղել է Ս. Ղազարի ձեռագրատան պատասխանատուն:

1986-91 թթ. դարձել է Ընդհանուր մեծավորը Մխիթարյան միաբանության:

1991 թ. Հովհաննես-Պողոս Բ Պապի կողմից նշանակվում է կաթողիկե առաջնորդ Հայաստանի, Վրաստանի ու Արևելյան Եվրոպայի:

1992 թ. նոյեմբերի 17-ին Պապի կողմից օծվում է տիտղոսավոր արքեպիսկոպոս՝ առաջնորդական Աթոռը հաստատելով Գյումրիում:

2005 թ., բոլորելով 75 տարին, առաջնորդական պաշտոնից իր հրաժարականն է ներկայացնում Հովհաննես-Պողոս Բ Պապին:

Կարճատև հիվանդությունից հետո ի Տեր հանգյավ 2006 թ. դեկտեմբերի 24-ին Աշոցքի իտալական հիվանդանոցում:

Թաղման կարգը կատարվեց 2006 թ. դեկտեմբերի 29-ին Փանիկում:

**«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:**